

ԳՈՒՐԳԵՆ ԴԱԴՈՒՄՅԱՆ

ՎՃՌԱԿԱՆ =

= ՇՐՋԱԴԱՐՁ

891.99

17-12

1935

22 JUN 2007

ԳՈՒՐԳԵՆ ԳԱԳՈՒՄՅԱՆ 19 NOV 2011

891.99  
7-12 *պ*

ԳՐԻՔՍ ՆՎԻՐՈՒՄ ԵՄ՝

Յեռեվանի մեխանիկական զործարանի կառավարիչ ՀՆԿ. ԻՎԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

ԳՈՒՐԳԵՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

«Գոլեովիկյան ուղի» բերրի

ՎՃՌԱԿԱՆ =

= ՇՐՋԱԴԱՐՁ

1008  
34821



1935



4 APR 2014

26868



# ՎՃՌԱԿԱՆ ՇՐՋԱԴԱՐԱ

1.

Առավոտ եր, ցուրտ ու անձրեվային  
առավոտ:

Աշնանային սառը քամին շրջում եր  
քաղաքի փողոցներով և անձրեվի կա-  
թիլներին միացած խփում եր անցու-  
դարձ անողների բաց դեմքերին:

— Ինչ ցուրտ ե, առում եյին շատերը և  
փաթաթվելով վերարկուների մեջ, շարու-  
նակում եյին իրենց ճանապարհը:

Շչում եյին գործարանների շշակները  
և գործի կանչում բանվորներին:

Բազմաթիվ բանվորական խմբեր գոր-  
ծարաններն են շտապում:

Առավոտյան կյանքը յեռում ե քաղա-  
քի բոլոր մասերում:

— Բարի լույս Ալեքսան, հանդիպելով  
ընկերոջը, ասաց մի բանվոր, սե յուզոտ  
շորերով, ճմրտված գլխարկով և կոպիտ  
կարված կոշիկներով:

— Բարի լույս, յերեսը դարձնելով ըն-

կերտը, պատասխանում է Ալեքսանը և շարունակում է քայլել նրա հետ:

— Գործերդ վոնց են գնում, Ալեքսան:

— Յես այս ամսվա պլանը գերակատարել եմ Արրահամ, քո գործերը վոնց են:

Արրահամը, վոր մի կարճահասակ մարդ էր: սև ունքերով, աստղանման փայլուն աչքերով, ժպիտը դեմքին իսկույն պատասխանում է նրան:

— Յես ել կգերակատարեյի, յեթե անցյալ որվա պատրաստածս պաչեվ-նիկներն մի մասը բրակ դուրս չգար, լավ ձուլված չլինելու պատճառով:

— Իսկապես. են որն ել հինգ հաս շեստերոնկա յես տաչիտ արի, վորոնցից միայն յերեքն եր մաքուր ձուլված, մյուսները բրակ եյին:

— Իս նրանից ե, վոր ձուլարանի վարպետները, պատասխանասու չեն զգում իրենց հանձնված գործի համար և պլանները կատարելու հետ միասին մոռացության են տալիս պատրաստած գործի վորակը: Նա գլխարկը իջեցրեց աչքերի

վրա, վերարկուի վարաանիկը վեր բարձրացրեց, վոր դեմքը կիսով չափ գոնե պաշտպանի ձյունախառն անձրևի կաթիլների հարվածներից:

Քամին շարունակում եր սուլել: Արրահամը և Ալեքսանը գործարանի դարպասից ներս անցան ընդարձակ բակը, վորտեղ թափված եր զանազան մեքենաների մասեր, իսկ նրանց հետեվից բազմաթիվ բանվորական խմբեր:

Հսկայական ամբոխ եր հավաքվել գործարանի գրասենյակի դռան մոտ: Նրանք անհանգիստ սպասում եյին զանգի ձայնին, վոր նշան եր աշխատանքի սկսվելուն:

Յերբ հերթապահ Դավիթը մոտեցավ զանգին, բանվորներն սկսեցին ներս մտնել գործարան, իրենց ամենորյա բնկերներ՝ մեքենաների մոտ:

2.

Բալականի ժամանակ եր անցել, ինչ աշխատանքն սկսվել եր բոլոր ցեխերում:

Արրահամը, յերբ գործը կապեց ստանոկից և մեքենան գործի պեց, գլուխը

վեր բարձրացրեց և տեսավ իր հարե-  
վան մեքենան չի աշխատում, մոտեցաւ  
Ալեքսանին և հարցրեց՝

— Ես մեր Լիպոն ելի չի՞ յեկել:

— Յերեվի չի յեկել, վոր դեռ մեքե-  
նան չի աշխատում: Աբրահամ մի նա-  
յիր սրան, ասաց Ալեքսանը մոտենալով  
Լիպոյի մեքենային, վոր գտնվում եր Ա-  
լեքսանի և Աբրահամի մեքենաների մեջ-  
տեղը, — քանի որ ե մաքրած չի, ու դեռ  
ռեզեցն ել կապած ե մնացել անցյալ  
որվանից:

— Շատ սիմուլյանտ սողա յե, անպի-  
տանը, ասաց նա և յերկուսն ել մոտե-  
նալով իրենց մեքենաներին, շա-  
քունակեցին իրենց աշխատանքը:

Լիպոն, մի միջհասակ, ձվաձև դեմ-  
քով, աչքերը խորն ընկած և սև ունքե-  
քով յերիտասարդ բանվոր եր, վոր ա-  
մեն որվա նման, այսոր ել զքնով եր  
ընկելը և աշխատանքից ուշացել. «չեմ  
կարողանում շուտ արթնանալ» պատաս-  
խանում եր նա ամեն անգամ, յերբ  
հարցնում եյին նրանից ընկերները թե  
ինչո՞ւ յե ուշացել:

Լիպոյի կրկնվող ուշացումների և բա-  
ցակալության համար ԼԿՅՆՄ բՆԻՆԸ  
նրա հարցը քննել ու զգուշացում եր  
արել, վորոշումը հրատարակելով պատի  
թերթում, բայց նա դարձյալ շարունա-  
կում եր համառել:

### 3.

Քաղաքային ժամացույցը խփեց ժա-  
մի 9-ը:

Լիպոն դեռ քնած ե, անկողնու մեջ,  
անկանոն շարժվելու հետեվանքով, վեր-  
մակի մեկն ընկել եր հատակին, իսկ  
մյուսն ել կեսից ավելին կախված եր  
մահճակալից:

Սենյակը շատ կեղտոտ եր, շորերը և  
մյուս իրերը թափթփված սենյակի գա-  
նազան մասերում: «Ժամանակ չունեմ  
զբազվելու սենյակիս կահավորման աշ-  
խատանքներով, և բացի դա, դա իմ  
ինչ գործն ե: Թամարան կզա, են ժա-  
մանակ թող կահավորի ինչպես ինքը  
կցանկանա» — ասում եր նա ինքն իրեն,  
յերբ շատ անգամ նկատում եր իր  
սենյակի կեղտոտ վիճակը:

Փողոցով անցնող ավառյի ուժեղ  
զուգուկը Լիպոյին արթնացրեց լուր քնից։  
Նա վեր ցատկեց և շորերը հագնելով  
զուրս անցավ լվացվելու։

—Ելի աշխատանքից ուշացել եմ,  
շնչաց նա սրբվելով։

Մի քանի րոպեյից հետո, նա անկա-  
ղինը կահավորեց, անցյալ որվանից  
մնացած հացի կտորը վերցրեց, ուտե-  
լով զուր կողպեց և շտապեց գործա-  
րան։

Նա քայլում էր փողոցով, շտապ  
լուռ և առանց շուրջը նայելու։

#### 4.

Ահա գործարանը, իր մի շարք ցեխե-  
րով, խառատի, փականագործական, ձու-  
լարան, գարբնոցի և այլն։

Սառատի ցեխում, չորս յերկար շար-  
քերով գործարանի յերկարությամբ շար-  
ված են զանազան մեքենաներ, փորոնց  
յուրաքանչյուրի զիմաց կանգնած են  
թեպեքը քշտած, ուժեղ բազուկներով  
ժպիտան դեմքերին հարյուրավոր բան-  
վոր-բանվորուհիներ։

Չանազան ցեխերը տանող ղեխների  
վրայով, վագոնեականերով բանվորները  
պատրաստված մեքենաների մասերն են  
տեղափոխում կամ նոր մշակելի մասեր  
բերում։

Բոլորն ուշադրությունները կենտրո-  
նացրել են իրենց գործի վրա և զբաղված  
են մեքենաների ղեկավարման գործով։

Լիպոն, առանց շուրջը նայելու, լուռ  
ներս մտավ գործարան և մտանալով  
իր ստանոկին սկսեց նայել նրան։ Գոր-  
ծը կապված էր վրան, նա ուղղացույ-  
ցի ոգնությամբ ստուգեց և ձեռքի մի  
շարժումով մեքենան գործի գցեց։

Յերկար լուռթյունից հետո սկսեց աշ-  
խատել նաև Լիպոյի մեքենան, բայց  
զեռ մի սլուռյտ չէր գործել, յերբ հան-  
կարծ լավեց մի ուժեղ շրխկոց։ Նա իս-  
կույն նորից մեքենան կանգնեցրեց ի-  
մանալու շրխկոցի պատճառը։ Չայնի  
հետ միասին նրա մեքենայի մոտ հա-  
վաքվեցին բազմաթիվ բանվորներ և լուռ  
նայեցին Լիպոյին, փորն այդ ժամանակ  
զբաղված էր մեքենայի կոտրված մա-  
սերը փնտռելով։

—Այդ ինչ ձայն եր այ տղա բոլորից առաջ անցնելով հարցրեց Ալեքսանը:

—Բան է կոտրվել... ավելացրեց Արթուրը, Ալեքսանի կողքին կանգնելով: Լիպոն չպատասխանեց նրանց:

—Տեսեք գույնը վոնց է գցել, ցածր ձայնով ասաց մի բանվորուհի:

—Տեսնես ինչն է կոտրվել, վոր են պես ուժեղ ձայն հանեց, խոսեց մի ուրիշ բանվորուհի:

—Այ թե ինչ, հազիվ լսելի ձայնով ասաց Լիպոն գեանից յուզոտ կլուչը վերցնելով: Լիպոն հիշեց, վոր անցյալ որը մեքենան կանգնեցնելիս ձեռքի կլուչը սխալմամբ դնում է ատամնավոր անիվի վրա և գնում տուն: Այսօր յերբ շտապ մեքենան գործի գցեց, առանց ստուգելու նրա մասերը, կլուչը ընկնում է իրար հակառակ պտտվող ատամնավոր անիվների արանքը և կտրում նրանց: Այս բոլորը նկատեցին նաև հավաքվածները:

—Մի նայիր մեքենայի շուրջը, մի քիչ մաքրիր այս փոշին հետո նոր գործի գցեյիր ելի, վրդոված տոնով ասաց Ալեքսանը:

—Ինչքան վատ է կոտրվել, բոլորովին անպետքացել է, շոշափելով կոտրված մասերը, ասաց Արթուրը:

Լիպոն կանգնած լուռ, մյուսների նման նայում էր կոտրված մեքենայի մասերին, վորը հետևանք էր իր անփութությանը:

Հեռվում, մեքենայի մոտ դբադված ցեխային վարպետը նկատելով հավաքվածներին, թողեց գործը և շտապ քայլերով մոտեցավ նրանց:

—Ինչ է պատահել, շտապ հարցրեց նա մոտենալով մեքենային:

—Շեստերոնկաներն է կոտրվել, պատասխանեց վարպետին մի կոմյերիտական «մոթալիափախ»-ի նման մազերով և կապույտ բանվորական արտահագուստով, վորը շատ սազում էր նրան:

Վարպետն ստուգելով մեքենայի կոտրված մասերի պատճառները, դարձավ Լիպոյին ասելով

—Բավական չի վոր աշխատանքից ուշանում ես, բավական չի վոր պլանները թերահատարում ես, բավական չի

վոր սառնակը այսքան կեղտոտ ես պահում, քո անզգուշ, անպատասխանատու վերաբերմունքի պատճառով հարյուրավոր ուղբիչների վրաս ես հասցնում զործարանինս Ինչու գործիքները չես հավաքում նոր տուն գնում, վոր այս փորձանքն ել չպատահեր: Այս ասելով նա մի րոպե լուռ նայեց Լիպոյին և հետո կտարված մեքենայի մասերը հավաքեց ու հեռացավ նրանց մոտից:

Վարպետի հեռանալուց հետո մյուսներն ել մոտեցան իրենց մեքենաներին, և շարունակեցին իրենց աշխատանքները:

Լիպոն նրանց հեռանալուց հետո մի քանի րոպե արձանացած մնալուց հետո, ուշքի յեկավ և մոտենալով մեքենայինս սկսեց մաքրել այն ձեռքի հին շորով:

Լիպոն մաքրելով մեքենան մասձում եր՝

— Յեթե յեռ անցյալ որը մեքենաս մաքրելի, գործիքներս հավաքելի ու նոր տուն գնայի, այս փորձանքն ել չեր պատահի: Հիմա իմ հարցը կուզարկեն բլիշ, վորպես վնասարարի, սև աախտակի

կբարձրացնեն, վորպես սիմուլյանտի, պրոգուլչիկի, թերթում կզրեն այսորվա վնասների մասին, վոր պատճառեցի յես և վերջապես բոլորը կիմանան այս մասին ու են ժամանակ չե ընկերական շրջանում յերեկա... — նա զզջաց իր արածը, հիշեց Թամարին, հիշեց ու անմիջապես մոռացուխյան տվեց նրան, յերբ աչքի առաջ պատկերացրեց, վարպետի նախաախնքները տալիս, բանվորների հայացքներն իրեն հառած և կտորրված մեքենայի մասերն առաջը թափված:

Լիպոն պահարանից հանեց մի մեծ կապ հին շորի կտորներ, մաքրեց ու սկսեց ամբողջ մեքենայի մասերը մաքրել նավթով:

Նա և աշխատում եր և նայում մեքենայի մոտ աշխատող Ալեքսանին ու Աբրահամին: Նախանձում եր նրանց, քայց այդ նախանձը բարի նախանձ եր, վորովհետև նա աշխատում եր նմանվել իր ընկերներին, թողնելով իր գործի անուշագիր լինելուց:

Յերեկո եր, յերբ ելեկտրական գանգը  
իփեց:

—Աբրահամ, ստանուկդ կանգնեցրու,  
աշխատանքը վերջացավ, ձայնեց իր ըն-  
կերոջը Ալեքսանը, իր մեքենան կանգ-  
նեցնելով:

—Ես ա հա, վերջացրի, թող ես ստրուշ-  
կան ել գնա կկանգնեցնեմ, պատասխա-  
նեց Աբրահամն աչքերը չհեռացնելով  
պտտվող բալվանկից:

—Շարաշ ե արդեն, շնչաց Լիպոն  
շարունակելով իր աշխատանքը:

Ալեքսանն ստանուկը մաքրելով, աչքի  
տակով նայում եր Լիպոյին, վորն այդ  
ժամանակ յուզում եր մեքենան:

—Չան տղա, վոր ամեն ոը բտենց  
մաքրելիր, հո ետը ետ փորձանքը չեր  
պատահի,—ասում եր Ալեքսանը, յերբ  
ձեռքերը մաքրելով մոտեցավ նրան Աբ-  
րահամը:

—Ադա ետորվա «Մեքենաշինարար» ք  
կարդացել ես, հեռաքրքիր հողվածներ

շատ կա, ասաց Աբրահամը, գրպանից  
հանելով թերթը:


Նա մի րոպե աչքերով փնտրելուց  
հետո սկսեց կարդալ մի թղթակցության  
մեջուեղից՝

—... Դարբին Պարոնիկյանից ընդուն-  
վում ե 30 հատ շպոնկա, նարյազը ստո-  
բազրվում և դրամը վճարվում ե, հե-  
տագայում պարզվում ե, վոր 10 հատը  
լավը չի և չպետք ե ընդունել, այդ մա-  
սին ել վոչ վոք չգիտե: Հետո կարդալն  
ընդհատելով սկսեց պատմել, մեկ-մեկ  
ել թերթից կարդալով:

—Հետո Պարոնիկյանը, գործից մի  
ժամ ավարա յե լինում և պարզում ե  
այդ գործը: Տո մենակ եդ չի, ել մեխ  
ցեխը դեռ վոչ մի անգամ հաշվի չի ա-  
ռել, թե ինչ ե պատրաստել, ետ գոր-  
ծերը վճրտեղ ե գտնվում, կամ իր  
պլանները վճրքան ե կատարել: Պատաս-  
խանատվությունը վերացել ե թե ցե-  
խում և թե որտաղրական բաժնում:

Աբրահամը փնտրեց ընթացքում Ալեք-  
սանն արդեն մաքրել եր մեքենան, ձեռ-

1008  
34821



բերը և վերարկուն վրան պցելով Արար-  
համի հետ միասին խոսելով հեռացան  
մերենայի մոտից:

Խուճը-խուճը բանվորները դուրս ելին  
գալիս գործարանից, ամեն մեկը մտքում  
փորոշելով վաղվա կատարելիք աշխա-  
տանքը:

Լիպոն բոլորից հետո դուրս յեկավ  
գործարանից: Նրա ղեմքի վրայից անհե-  
տացել էլին ամենորյա ուրախ ժպտը:

Նա քայլում եր փողոցով գլուխը կախ  
և մտքերի մեջ խորասուզված:

— Այս կողմ արի այ տղա, ասաց մի  
անցորդ Լիպոյի թեվից բռնած ղեպի աջ  
քաշելով:

Լիպոն սթափվեց և գլուխը վեր բար-  
ձրացնելով տեսավ իր մոտից անցնող  
սրնթաց ավտոյին, փորի տակը պիտի  
ընկներ ինքը, յեթե շլիներ անցորդի  
ոգնությունը:

Այս ղեպքից ազդված, նա սկսեց քայ-  
լել փողոցի աջ կողմով, քայլերն արա-  
զացնելով:

Լիպոն ինքն ել չիմացավ թե ինչպե՞ս  
տուն հասավ, այնքան մտքերի մեջ եր  
ընկեր: Նա սենյակ մտնելով դուռը կող-  
պեց ներսից, և մտանալով մահճակալին  
բերանքավեր պարկեց անկողնու վրա և  
սկսեց կամաց շնջալ:

— Այ գիտի հա, ամեն ոք հենց տուն  
եյի գալիս, խոկույն լվացվում, կա-  
տյումս հագնում էյի ու շտապում թա-  
մարի հետեվից: Ժամերով ման էյի գա-  
լիս չէյի գտնում, կամ յերբ գտնում  
էյի, տեսնում էյի մի քանի տղաների  
հետ թեվանցուկ արած Աբովյանում  
զբոսնում էյին: Անհարմար էյի զգում  
մոտենալ նրան և մի խոսք ասել: Իսկ  
յերբ մենակ էյի պատահեցնում, դեռ  
մի խոսք չասած հեռանում եր: Հետո  
նա աջ կողքի վրա շրջվելով սկսեց մը-  
տածել:

— Ձե, նա վերջերս ենքան ել ինձ հետ  
լավ չի: Ծանապարհին ինձ տեսնելիս,  
քայլերը թեքում և ուրիշ ուղղությամբ:  
Յերկու անգամ նամակ եմ տվել չի

վերցրել: Նա ընդհանրապես ինձանից շատ հեռու յե փախչում: Նա սեղանի վրայից վերցնելով վերարկուս պցեց իր վրա քնելու ցանկությամբ, բայց մի քանի րոպե չեր անցել յերբ հանկարծ պայթող ոււմբի նման, տեղից վերցատկեց և սկսեց սենյակի մեջ հետ ու առաջ քայլել իրեն-իրեն խոսելով:

—Չե, յես պետք ե ինձ հավաքեմ, մի քիչ իմ գործերին ուշադրություն դարձնեմ: Ինչու պիտի գործս թողած մի ազջկա հետեւից ընկնեմ: Յես կոմ-յերիտական եմ և ինձ պիտի նվիրեմ մեր գործարանի պլանների կարտարման գործին: Չե վոր անցյալ որվա կոլեկտիվի ժողովում ընկ. Բալյանն այդպես եր ասոււմ, հրա նա ասաց, վոր մեր գործարանը մի պարզերես պլանները կատարած հանդես չի յեկել: Չե, յեթե յես լավ մտանակցեմ իմ աշխատանքներին, պրոգուլ չտամ, սիմուլյանտություն չանեմ, բջիջն ել ինձ նկատողություն չեր անի և հյտ հարվածային կոչում ել կտային:

Նա մոտեցավ սեղանի վրա դարսված գրքերին և այնտեղից վերցնելով Լենինի յերկերի Զ-րդ հատորը, սկսեց թերթեր: Այդպես բաց ու խուփ անելով նա նորից դրեց իրեն տեղը և սկսեց շորերը հանել:

Լիպոն այնքան եր տարվել նոր մտքերով, վոր չեր զգում քաղցածություն և այդպես ել վառ մտքերով պառկեց ու քնեց:

## 7.

Գիշերվա ժամի շորան եր, յերբ Լիպոն քնից արթնացավ ու անկողնու մեջ նստած, աշխատեց փոքրացած բիբերը լայն բանալ՝ տեսնելու առավոտյան վնր ժամն ե, և հետո, աշխատանքից հո չի ուշացել:

—Չե, դեռ բավական ժամանակ կա: Յես կարող եմ լվացվել, թեյել և նոր միայն աշխատանքի գնալ, ասաց նա իսկույն հազնվելով:

Կես ժամ չեր անցել, յերբ նա ելելատրական լույսի տակ թեյի պատրաստություն եր տեսնոււմ:

ժամանակը սահում էր արագ:

— Արդեն ժամանակն է գործարան դնալու, թեյը վերջացնելով, ասաց նա, ու մեծ ախորժակով ուտելով անցյալ որվա մնացած հացի կտորը, դուրս անցավ դուռը կողպելով:

Լիպոն քայլում էր արագ, հասնելով ու անցնելով քայլոդ շատ խմբերի:

Նա քայլելով շարունակ մտածում էր, թե ինչպես իր կիսատ թողած գործերը վերջացնի ու յերբ իր մեքենան վերանորոգած պատրաստ կլինի:

— Այ տղա, ինչո՞ւ յես եղպես շտապում, իր կողքով անցնող Լիպոյին նրկատելով ասաց Աբրահամը, ինքն էլ քայլելով նրա հետ:

— Յերեվի կարծում է նորից ե ուշացել աշխատանքից, կես ծաղրական ձև տալով խոսքին, ավելացրեց Ալեքսանը, շարունակելով ճանապարհը նրանց հետ:

— Ինչո՞ւ յեմ շտապում, ենա սովորական ձեվով քայլում եմ էլի: Սաացի մի քիչ շուտ գնամ, տեսնեմ կարող եմ

եսոր մի ուրիշ ստանոկի վրա կիսատ թողած գործերս վերջացնեմ, կես ամաշելով իր անցյալ որվա արարքից և մի քիչ էլ վերավորված Ալեքսանի խոսքերից, հանդարտ տոնով խոսեց Լիպոն, քայլերը դանդաղեցնելով:

— Իե՞ս կես ժամ ժամանակ կա, մի վախիլ: Ստանոկ էլ կա, Յերվանդը հիվանդ է, նրա ստանոկի վրա կաշխատես մինչև քոնը վերանորոգեն, անսպասելի կերպով լսելով Լիպոյի վողեվորիչ խոսքերը, Աբրահամն սկսեց ընկերական խորհուրդներ տալ նրան, աշխատանքի յեռանդ ներշնչելով նրա մեջ:

— Յես իմ հողին լավ է մտածել, ասաց Ալեքսանը, ձեռքը դնելով Լիպոյի ուսին— Յերվանդի ստանոկի վրա կաշխատես, կիսատ թողած գործերդ կվերջացնես, հետո յերբ անցար քո ստանոկի վրա, կսկսես նոր պատվերներ ընդունել:

Նրանց դեմքերի ուրախ ժպիտները նմանում էր հասած ցորենի հասկերին, առավոտյան արեվի ճառագայթներին տակ:

Լիպոն շարունակ մտածում էր, թե  
ինչպես գործի, վոր ինքն էլ ուրիշնե-  
րի նման առաջ անցնի, իրեն էլ հար-  
վածայինի կոչում տան, այն միակ  
ցանկությունը, վորին հասնելու համար  
նա իր վողջ ուժերն էր լարել:

Մի քանի րոպե և անա նրանք աշ-  
խատում են մեքենաների մոտ կանգ-  
նած:

8.

Լիպոն առաջին անգամ, յերբ մոտե-  
ցավ իր մեքենային, իր վճռական շք-  
ջադարձի յերրորդ օրն էր: Նա գլուխը  
կախ, սկսեց մեկ առ մեկ դիտել վե-  
րանորոգված մասերին:

— Ես անգամ ընենց պահեմ ստանուկս,  
վոր տեսնողի քեֆը գա, շշնջաց նա,  
մաքրելով մեքենայի վրայի փոշին:

Լիպոն արդեն իր կիսատ թողած  
գործերը վերջացրել էր և մի հատ էլ  
բալվանկա յեր պատրաստել Աբրահամի  
հաշվից, ի պատիվ նրա ընկերական վե-  
րաբերմունքին: Հիմա նա արդեն գրա-  
սենյակից ստացել է պատվերներ և

սկսել է իր մեքենայի վրա աշխատել:

Քաղցր էր, շատ քաղցր, յերբ Լի-  
պոն առաջին անգամ լսեց իր մեքե-  
նայի ուրախ յերգը, վորն իսկույն միա-  
ցավ մյուս մեքենաների յերգերին և  
կազմեց մի ընդհանուր համերգ:

— Դե հիմա ստանուկդ ենպես պահիք,  
վոր հարյուր տարի աշխատի առանց  
վերանորոգման, ասաց Աբրահամը կանգ-  
նելով Լիպոյի կողքին:

— Ատենց էլ վորոշել եմ, ուրախ  
ժպիտը դեմքին, պատասխանեց նրան  
և սկսեց չափումներ անել մեքենայի  
վրա կապած գործի ճշտությունը վո-  
րեշելու համար:

— Ֆտուկաներ ես պատրաստում,  
նորից խոսեց Աբրահամը:

— Այո: Քսանհինգ հատ ֆտուկա պի-  
տի պատրաստեմ, դա, վոր վերջացրի,  
պիտի սկսեմ տրակտորի ոսերի պատ-  
րաստման աշխատանքները, ասաց Լի-  
պոն ձեռքի արագ շարժումով պատ-  
րաստված ֆտուկան ցած դրեց և կա-  
պեց յերկրորդը: Նա բոլոր շարժում-

ները կատարում եր արագ և աշխուժ,  
վոր Աբրահամը զարմացել եր:

—Տես ե. մի շաբաթ առաջ գործը  
կիսատ թողնում փախչում եր տուն.  
կամ շարունակ սիմուլյանտի նման այս  
ու այն բանվորի մոտ կանգնում, ժա-  
մերով գրույց եր անում, մի պաշեմխի-  
կը մի ժամում հագիվ եր պատրաս-  
տում, իսկ հիմա ինչպես ե աշխատում,  
մտածում եր Աբրահամը:

—Ես տեմպով, վոր աշխատես, ես  
ամսվա սլանը հիսուն տոկոսով կգերա-  
կատարես, ասաց Աբրահամը Լիպոլին.  
ավելի վոգեվորելու նպատակով:

Լիպոն միայն ժպտաց Աբրահամի գո-  
վասանքից: Նա արդեն սովորել եր քիչ  
խոսել—շատ գործ կատարել:

Լիպոն ավելի յեր վոգեվորվում, յերբ  
տեսնում եր իր մեքենայի մոտ զարս-  
ված, մի մասը մշակված և մի մասն  
անմշակ գործերը: Նա արագ շարժում-  
ներով հանում եր մշակված գործը և  
կապում եր մի նոր մշակելին:

Յերբ Աբրահամը հեռացավ, նա իր  
շարժումները կրկնապատկեց և մի ցածր

ձայնով, ինչվոր անհասկանալի յերգ  
սկսեց յերգել, հետեվելով մշակվող գոր-  
ծի ընթացքին:

9.

Ելեկտրական պայծառ լույսով լուսա-  
վորվել եր Աբովյան դպրոցի ընդարձակ,  
ձյան բարակ շերտով ծածկված բակը:

Ձյունի արծաթյա գույնի թերթիկնե-  
րը թափվում եյին ընդարձակ բակում  
զբոսնող ուսանողական խմբերի վրա.  
բայց, վորովհետև տաք եր յեղանակը,  
նրանք չեյին դժգոհում իրենց վրա թափ-  
վող ելեկտրական լույսից փայլկառոգ  
ձյան թերթիկներից:

Բակում զբոսողների թվին եյին պատ-  
կանում նաև Աբրահամն ու Ալեքսանը,  
վորոնք հագնված եյին շիվյոտե կաս-  
տյումներ, կրկնակոշիկներով, գեղին  
տուֆլիններ և բավականին հաստ կոտ-  
րից վերարկու ու գլխարկ: Յերկուսի  
թեվերի տակ ել կար միջին հաստու-  
թյամբ մի քանի գրքեր:

—Եսոր իմ յեռամսյա բոլոր առա-  
ջադրությունները կտամ կվերջացնեմ:

Արդեն հայոց լեզվից և մաթեմատիկայից բավարար եմ ստացել, ասաց Աբրահամն Ալեքսանին:

— Իսկ իմը մնում է տալու միայն ուսաց լեզվի և քաղաքատեսության առաջադրությունները, վորոնք լավ պատրաստել եմ արդեն, ասաց Ալեքսանը, մի հայացք ձգելով դեպի իրենց մոտեցող, մաքուր հագնված, մի սումկա լի զրքերով թեփի տակ դրած յերիտասարդը:

Մոտեցող դեմքին խելույն ճանաչելով Ալեքսանը, մի բարակ ճիչ արձակեց:

— Վա... Լիպո եզ զո՛ւ յես, ասաց Ալեքսանն իրենց դիմաց կանգնած տեսնելով Լիպոյին:

— Ես ինչա Լիպո, զո՛ւ յել ես բանֆակ գալի՛, ասաց Աբրահամը մեղմորեն:

— Հա տղերք: Են որը մեր դիրեկտոր ընկ. Մինասյանն ինձ ասաց, թե չես ուզի քեզ բանֆակ ուղարկենք: Յես համաձայնվեցի ու մի դիմում տվի: Ես որ ինձ հայտնեց նորից, վոր ընդունվել եմ և կարող եմ այսորվանից հաճախել:

— Չե՛ վոր մի յեռամսյակ անցել է, բա ի՛նչպես պիտի եզ բոլոր դասերը պատրաստես, ասաց Ալեքսանը մտերմական ձեվով:

— Իստերը վոչինչ, մենք ել կոգնենք, կպատրաստի, վոզեվորված խոսեց Աբրահամը, տեսնելով թե ինչպես է նա վճռական շրջագարձ կատարել իր ամենորյա մինչև կես գիշեր զբոսանքը փոխանակելով ոգտակար աշխատանքով— դպրոց հաճախելով:

Տասը բուպե չանցած, Լիպոն արդեն իր ընկերների հետ միասին, լսում եր դասախոսին: Նա սկզբում զբաղված եր շուրջը նայելով և չեր հետևիլում դասի ընթացքին:

Յերբ զասը վերջանում եր, նոր միայն սկսեց լսել դասախոսի հետաքրքիր պատմությունը, — բոլորի նման լուռ և ուշադիր:

— Ի՛նչ լավ է բանֆակ հաճախելը: Յես պե՛տք է այնպես պատրաստեմ դասերս, վոր մյուս յեռամսյակին բոլոր առաջադրություններս տված պրժած

լինեմ, խոստացած նա իր ընկերներին,  
յերբ նրանք ճանապարհին բաժանվեցին,  
ամեն մեկը գնալով իրենց տուն:

10.

Մի մեծ սենյակի, փոքրիկ, կարմիր  
կտորով ծածկված սեղանի շուրջը նրա-  
տած եյին տասից ավելի բանվոր-  
բանվորուհիներ:

Մի յերիտասարդ, կոմսոմուլի ֆորմա-  
յով, ինչ վոր հետաքրքիր խնդրի մասին  
գեկուցում էր, իսկ մյուսները լուռ լը-  
սում էին նրան:

Չեկուցողը Լիպոն էր: Յերկարատե  
որինակելի աշխատանքների համար, պը-  
րոֆիտիկտիվը նրան հարվածայինի կո-  
չում էր ավել, իսկ հիմա յել Անդրֆե-  
զերացիայի տասնամյակի անվան հար-  
վածային բրիգադի նախագահ է ընտրը-  
վել: Նա այսօր նիստ է հրավիրել ու  
քննում է մի շատ կարելիոր հարց:

— Ի՞նչպես վերացնել անցյալ ամսվա  
ձեզրվածքները և ի՞նչպես կատարել ու  
գերակատարել այս ամսվա պլանները:

Բրիգադի անգամ Աբրահամը ձայն է  
խնդրում և խոսում է.

— Ընկերներ, յես առաջարկում եմ,  
մեր ցեխում կախել մի տախտակ և ա-  
մեն հինգ օրը մեկ անգամ, ցույց տալ  
թե պլանների վճիռ տոկոսն է կատարվել:

— Ինձ էլ մի ձայն տուր, ընկ. նա-  
խագահ. յես էլ առաջարկություն ունեմ,  
ասաց Ալեքսանը:

— Խնդրեմ, ասացեք:

— Յես առաջարկում եմ, սրանից հե-  
տո ով ուշանա, կամ բացակայի աշխա-  
տանքից, նրան բարձրացնել սև տախ-  
տակի:

— Ընկեր Լիպո, մի ձայն էլ ինձ տուր,  
ասաց Չարիկը, վտտի կանգնելով:

Ասեք ընկեր Չարիկ, ասաց Լիպոն,  
Ժպիտը դեմքին, սպասելով նրա խոսե-  
լուն:

— Յես էլ առաջարկում եմ, մի փո-  
խանցիկ դրոշակ պահել և այդ դրոշակը  
կախել այն հարվածայինի ստանոկի վե-  
րելը, վորն իր պլանները բոլորից շուտ  
է գերակատարել:

— Ճիշտ է առաջարկում, ճիշտ, չորս  
կողմից ձայնեցին բանվորները:

— Ընկերներ, յես կարծում եմ, բոլորի արած առաջարկություններն էլ ճիշտ են, և մենք այդ առաջարկությունները կրնդունենք:

— Ովքեր համաձայն են, թող ձեռք բարձրացնեն, նա տեսնելով բոլորն էլ համաձայն են՝ գոչեց՝

— Անցավ միաձայն:

Նրանք մի քիչ էլ խոսեցին վաղվա կատարելիք աշխատանքների մասին ու նիստը փակեցին:

Բոլորը ցրվեցին, ամեն մեկը վորոշելով, ամեն կերպ աշխատել փոխանցիկ զրոշակն իր մեքենայի վրա ծածանվի:

Լիպոյի վճռական շրջադարձի հինգերորդ ամիսն էր, վոր նա արդեն լծվել էր գործարանի պլանների կատարման ու գերակատարման մեծ գործին:

(ՎԵՐՋ)



Այս պատմվածքի բեման հանձնարարել և գրելիս անհրաժեշտ ցուցումներ ե սվել ընկ. Արսաես Վոսկեցյանը:

Այս պատմվածքը խմբագրել և սպագրության համար պատրաստել ե ընկ. Սողոմոն Տարոնցին:

Այս պատմվածքն առաջին անգամ սպագրվել ե՝ Միքա Մարկոսյանի խմբագրած՝ «Մեկնեալնարտ» քերթի № 7, 8, 9 և 10-ում 1932 թ. Յեբեվանում:

Գիրքը սպագրված ե՝ Նոր-Բայազետի սպարանում, սպարտեի վարիչ ընկ. Նավխար Մանուչարյանի սրբագրությամբ:

20 XII 1934 թ.

Նոր-Բայազետ

«Ազգային գրադարան»



NL0331216

9466 50 409.

26868